ԿԵՐՊԱՐՎԵՍՏ
Թեմատիկ պլանավորում
**3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ**

| | Դասարան | Նպատակը | Ակնկալվող վերջնարդյունքներ |
|---|---|---|---|
| | Առաջին կիսամյակ | | |
| 1. | Հեքիաթ տաք և սառը գույների մասին | Վարժություններ տարբեր որակների և գույների թղթերի վրա:<br>Նյութերի և գործիքների փորձարկում: | Միախառնի գույները՝ ստանալով նոր գույներ, տարբերի հիմնական և բաղադրյալ, տաք և սառը գույները: |
| 2. | Տարվա եղանակներ | Գուաշի փորձարկում տարբեր որակների և գույների թղթերի վրա:<br>Հորինվածքների ստեղծում բնական մոտիվների հիման վրա: | Ստեղծի բազմազան գունատոնային նրբերանգներ և դրանք օգտագործի գեղարվեստական կամ դեկորատիվ պատկերներում: |
| 3. | Տիկնիկային ներկայացման էսքիզներ | Պարզ երկրաչափական, բուսական կամ ազատ ձևերի միջոցով աշխատանքների կատարում, ստվերների արտահայտմամբ:<br>Դեկորատիվ աշխատանքներ ուրվապատկերների կիրառում: | Ազատորեն ստեղծագործի, աշխատանքներում ցուցադրի ստվերների առկայությունը:<br>Բնօրինակից ստանա առարկաների ուրվապատկերները: |
| 4. | Անիմալիստական ժանր<br>Ընտանի և վայրի կենդանիներ | Թեմատիկ նկարչություն դիտման, պատկերացման, հիշողության և հեքիաթների ձևավորման միջոցով: | Արտահայտի կենդանական աշխարհի նկատմամբ հոգատար վերաբերմունք, զարգացնի դիտողականությունը, կերպարային մտածողությունը: Պատկերի կենդանիներ:<br>Տարբերի անիմալիստական ժանրը: |
| 5. | Իմ ծնողների դիմանկարները | Դիմագծերի ընդհանրացման և նմանության կարողությունների ձևավորում: | Չափումների միջոցով պատկերի դեմքի կառուցվք: Կիրառի դիտման, ուսումնասիրման արդյունքում ձեռք բերված գիտելիքները: |

| | | | |
|---|---|---|---|
| 6. | Վարդավառ<br>Նուրի-Նուրի տիկնիկ | Բնության էտյուդային պատկերում (պլե-ներ) կամ պատկերում հիշողությամբ: Ազգային-եկեղեցական տոների իմացություն, միջառարկայական կապերի պահպանում: | Ստեղծի երևակայական հարթ և ծավալային պատկերներ: Աշխատանքներում պահպանի տոնի զգացողությունը: Մեկնաբանի և վերլուծի՝ ի՞նչն է հավանում, ի՞նչը՝ ոչ: Ներկայացնի կարծիք: |
| 7. | Հեքիաթի կամ պատմվածքի ձևավորում | Ստեղծագործական հորինվածքների կատարում: Ստեղծագործական ներուժի ակտիվացում աշխատանքի պլանավորման, արդյունքնների ստացում: Կենդանիների, թռչունների և մարդու մարմնի պատկերում: | Ստեղծի հորինվածքներ, որտեղ կարտացոլվեն սովորական մարդուն և հեքիաթների հերոսներին բնորոշ գծեր: Ազատ արտահայտի մտքերն ու գաղափարները՝ կատարելով 2D և 3D աշխատանքներ: |
| 8. | Տիեզերք | Երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքների կատարում: Ինքնուրույն աշխատելու, հորինվածքները համարձակ պատկերելու կարևորում: | Միտքը պատկերի հետաքրքիր և ներկայացնի իր կատարած աշխատանքները: Ստեղծի հորինվածքներ: (նկարչական նյութը՝ ջրաներկ, գուաշ, գու-նամատիտ, մոմակավիճներ, սպիտակ կամ երանգավոր թղթի վրա): |

| | | | |
|---|---|---|---|
| 9. | Հայկական մանրանկարչություն<br>Բացիկ, պաստառ | Նախշերի կատարում, մանրանկարչության զարդանախշերի կիրառմամբ:<br>Պաստառների կամ շնորհավորական բացիկների պատրաստում և ձևավորում: | Պահպանի պաստառի կամ բացիկի ստեղծման համար անհրաժեշտ գունային, գծային, դեկորատիվ արտահայտչականության, թղթի մեջ ճիշտ տեղադրման պայմանները:<br>Ծանոթ լինի զարդանախշին՝ որպես ազգային կոլորիտի առանձնահատկություն: |
| 10. | Խատուտիկները դաշտում | Բնապատկերի կատարում միայն գծի կամ միայն գույնի միջոցով: | Աշխատանքներում պահպանի համաչափություն:<br>Պատկերները ճիշտ տեղադրի թղթի հարթության մեջ: |
| 11. | Վ. Կանդինսկու գունային կոմպոզիցիաների մոտիվներով տերևների պատկերում: | Գծերի, ձևերի, երկրաչափական պատկերների միջոցով ճանաչելի պատկերների և հորինվածքների ստեղծում: | Կիրառի հիմնական և բաղադրյալ գույները և ստանա նոր գույներ:<br>Բնօրինակից ստանա վերացական պատկերներ: |
| 12. | Հեքիաթային անտառում | Հայ և համաշխարհային կերպարվեստի բնանկարների ուսումնասիրություն:<br>Արվեստագետների գործունեության առանձնահատկությունների և դրանց կարևորության վերհանում: | Ունենա գեղեցիկը տեսնելու, պահպանելու ցանկություն: Դասակարգի ստեղծագործություններում հաղիպող կերպարվեստի տարրերը և սկզբունքները (գույն, գիծ, ձև, պատկեր, մակերես):<br>Կիրառի հիմնական և բաղադրյալ գույները և ստանա նոր գույներ: Ճեպանկարի՝ բնօրինակից, երևակայությամբ և հիշողությամբ, եթե առարկան հնարավոր չէ զննել: |

| | | | |
|---|---|---|---|
| 13. | Եթե կախարդական ակնոցներ ունենայի Ապլիկացիա | Երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքների կատարում, որոնք արտահայտում են տրամադրություն, զգացմունք կամ անձնապես կրած հուզական վերաբերմունք: | Կատարի համաչափության, գծերի ընդհանուր դասավորության, կոմպոզիցիոն համաչափության, ուսումնասիրության և համեմատության վրա հիմնված վարժություններ և ստեղծագործական աշխատանքներ: Պահպանի հորինվածքների պատկերման, սոսնձման միասնականությանը: |
| 14. | Նկարիչը կրկեսում | Երևակայության և զգացմունքների վրա հիմնված աշխատանքների կատարում: | Կիրառի համապատասխան գուներանգներ: Աշխատանքը ճիշտ տեղադրի թղթի հար-թության մեջ:<br>Կառուցի կոմպոզիցիաներ տարբեր չափերի թղթերի վրա: |
| 15. | Զարմանահրաշ ծովային թագավորություն | Գծերի, ձևերի, երկրաչափական պատկերների միջոցով ճանաչելի պատկերների և հորինվածքների ստեղծում: | Արտահայտի մտքերն ու գաղափարները կատարելով 2D և 3D աշխատանքներ եզրագծերով, տոներով և գունային երանգներով: Կիրառի հիմնական և բաղադրյալ գույները և ստանա նոր գույներ: Ստեղծի երևակայական հարթ և ծավալային պատկերներ: |
| 16. | Զարմանալի տրանսպորտային միջոցներ | Ստեղծագործական ներուժի ակտիվացման, աշխատանքային փուլերի պլանավորման, արդյունքների ստացման կարողություն: | Աշխատանքը ամբողջացնի ստեղծագործական հնարներով: Ներկայացնի իր ստեղծագործական աշխատանքները: Միտքն արտահայտի անկաշկանդ ու հետաքրքիր: |

| | | | |
|---|---|---|---|
| 17. | Աշխարհի ժողովուրդների տիկնիկները | Տարբեր ազգերի մշակույթի, ազգային կոլորիտի առանձնահատկության մասին պատկերացման ձևավորում: Գեղագիտության և ստեղծարարության արժևորում: | Փորձարկի տարբեր նյութեր՝ հետաքրքիր աշխատանքներ ստանալու նպատակով: Ստեղծի պատկերներ, կոլաժներ, ծավալային աշխատանքներ, նաև թափոններից: Ճանաչի տարբեր ազգերի տիկնիկներին, իմանա անունները: |
| 18. | Ջմեռ Պապի ու թզուկների խաղալիքների գործարանը Լապլանդիայում | Ստեղծագործական երևակայության ունակությունների ձևավորում: | Ներկայացնի իր ստեղծագործական աշխատանքները: |
| 19. | Նորարական նկարչություն: Եթե վրձին չօգտագործել: Նկարչություն պուանտելիզմի ոճով: | Ստեղծագործական աշխատանքներում նյութերը, մեթոդները և միջոցները փորձարկելու, ընտրություն կատարելու կարողությունների ձևավորում: | Ինքնուրույն վերաբերմունք արտահայտի: Բացատրի, թե ինչպե՞ս են գույները, կետերը, գծերը և պատկերները դարձել նկար: Ներկայացնի, թե ինչո՞վ է արվեստի ստեղծագործությունը նման կամ տարբեր իրականությունից: Անվանի նյութերն ու գործիքները: Ազատորեն ստեղծագործի մատներով, ձեռքերով, գրաֆիկական գործիքներով՝ կավճամատիտ, գրիչ, մատիտ, վրձին և այլն: |
| 20. | Ինտեգրված դասընթացի արդյունքների ամփոփում | Ստեղծագործական առաջադրանքների կատարում, տարբեր նյութերի կիրառմամբ: Պատկերվող կերպարների, երևույթների, իրադարձությունների նկատմամբ զգացմունքային և գեղագիտական վերաբերմունքի ձևավորում: | Անվանի նյութերն ու գործիքները: Համեմատի նյութերը: Օգտագործի մասնագիտական բառապաշար: Բանավոր կամ գրավոր ներկայացնի աշխատանքների հիմնական առանձնահատկությունները: |

| | | | |
|---|---|---|---|
| Երկրորդ կիսամյակ | | | |
| 21. | Խեցեգործություն | Գեղարվեստական ժառանգության ուսումնասիրություն ժողովրդական արվեստի կամ տեղական երկրագիտական թանգարաններում: Նյութերի ու գործիքների անվանումների իմացություն: Նյութերն ըստ նշանակության կիրառելու հմտությունների ձևավորում: | Կատարի համաչափության, գծերի ընդհանուր դասավորության, կոմպոզիցիոն համաչափության, ուսումնասիրության և համեմատություն: Աշխատանքներում ներկայացնի ազգային մոտիվները: |
| 22. | Խաչքար | Ազգային նկարագրի, խորհրդանիշների և արտահայտչամիջոցների գեղարվեստական մատուցում: Բարոյական արժեքային համակարգի ձևավորում : | Մեկնաբանի, թե ինչպե՞ս են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը: Աշխատանքներում ներկայացնի ազգային մոտիվները: |
| 23. | Նկարիչների հետքերով: Վան Գոգ | Ծանոթացում արտասահմանյան նկարիչների աշխատանքերին: | Իմանա որոշ տեղեկություններ նկարչի կյանքից, ճանաչի մի քանի հայտնի նկար: |
| 24. | Պատկերում ենք «Կենաց ծառ»: | Իրատեսական, վերացական և երևակայական աշխատանքներ ստեղծելու առանձնահատկությունների ձևավորում: | Ստեղծի աշխատանքներ ըստ թեմայի, գաղափարի, սկզբունքի, բառակապակցության: Ձևավորի բառապաշար: |
| 25. | Կախարդական լապտերներ | Աշխատանքային իմպրովիզացիայի դեկորատիվ վերարտադրելու կարողություն: Ստացած գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու կարողություն: | Միտքը պատկերի հետաքրքիր և ներկայացնի իր կատարած աշխատանքները: Ներկայացնի իր և ընկերների աշխատանքները օգտագործելով մասնագիտական բառապաշար: |

| | | | |
|---|---|---|---|
| 26. | Ուրվապատկեր<br>Սև, սպիտակ: Ապլիկացիա: | Դիտման, ուսումնասիրման արդյունքում ձեռք բերված գիտելիքների կիրառման կարողությունների ձևավորում: Հորինվածքների պատկերման, սոսնձման միասնականության ապահովման կարողություն: | Տարբերի ուրվապատկերներ, կոնտրաստային հարաբերություններ: Կարողանա ստվարաթղթի, նաև այլ թղթերի վրա սոսնձել, ձևավորել թղթիկներ ու այլ սոսնձվող նյութեր: |
| 27. | Հայկական ժողովրդական մանկական խաղեր: Պատկերում ենք Ակլատիս պապին, Ուխտիս տատին | Տարբեր պատմական իրադարձություն-ներ ներկայացնող ստեղծագործություն-ների դիտում: Երկիրը, սովորույթները ներկայացնող աշխատանքներում բնորոշ տարրերը տեսնելու, պարզաբանելու կարողությունների ձևավորում: | Նկարագրի արվեստի ստեղծագործությունները: Մեկնաբանի, թե ինչպե՞ս են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը: Ճանաչի հայկական ծիսական տիկնիկները, դրանց հետ կապված խաղերը, ավանդույթները: |
| 28. | Մենք տիկնիկային թատրոնի նկարիչներ ենք | Աշխատանքային իմպրովիզացիայի դեկորատիվ վերարտադրելու կարողություն: Ստացած գիտելիքները ստեղծագործաբար կիրառելու կարողություն: | Ստեղծի հորինվածքներ, որտեղ կարտացոլվեն սովորական մարդուն և հեքիաթների հերոսներին, տիկնիկային թատրոնի տիկնիկների կերպարներին բնորոշ գծեր: |
| 29. | Նատյուրմորտ | Բնօրինակից, հիշողությամբ և պատկերացմամբ կենցաղային տարբեր իրերի՝ մրգերի, բանջարեղենի, ծաղիկների պատկերում, ճեպանկարում: | Ներկայացնի իր և ընկերների աշխատանքները՝ օգտագործի մասնագիտական բառապաշար: Պատկերվող առարկաներին հաղորդի ծավալ: Ուսումնասիրի լույսի և ստվերի հարաբերությունը: |

| | | | |
|---|---|---|---|
| 30. | Անիմացիա | Ստեղծագործական աշխատանքը մեկնաբանելու, քննարկելու, գնահատելու հմտությունների ձևավորում: | Կատարի ձեպանկարներ, նախագծի և պատրաստի տիկնիկներ (մարիոնետներ) ներկայացման համար: |
| 31. | Գարնանային բնանկար<br>Գունանկար | Հայ և համաշխարհային կերպարվեստի բնանկարների ուսումնասիրություն: Արվեստագետների գործունեության առանձնահատկությունների և դրանց կարևորության վերհանում: | Ապահովել ծավալ, տոն, տարածություն, ռիթմ և միասնականություն,կիրառել սառը և տաք գույները աշխատանքին արտահայտչականություն հաղորդելու համար: |
| 32. | Թղթե հագուստի մոդելների պատրաստում: «Ինչպե՞ս են հագնված Ծաղկի քաղաքի բնակիչները» | Հորինվածքների պատկերման, սոսնձման միասնականության ապահովման կարողություն: | Մոդելավորի հեքիաթային կերպարների հագուստ: Ճիշտ օգտագործի կտրող, սոսնձող, սոսնձվող նյութերն ու պիտույքները:<br>Կիրառի թղթի, ստվարաթղթի կտրահանման հեշտ ձևեր: |
| 33. | Զարդագրեր: Էջանշանի պատրաստում, ձևավորում: | Ստեղծագործական աշխատանքներում նյութերը, մեթոդները և միջոցները փորձարկելու, ընտրություն կատարելու կարողությունների ձևավորում: Աշխատանքային իմպրովիզացիայի ռեկորատիվ վերարտադրելու կարողությունների ձևավորում: | Ճանաչի հայկական զարդագրերի տեսակները: Ծանոթ լինի զարդանախշին որպես ազգային կոլորիտի առանձնահատկություն: |
| 34. | Հայկական զարդանախշ: Ժապավենաձև հայկական զարդանախշի պատկերում: | Զարդանախշն իբրև թեմատիկ-իմաստային միասնություն ընկալելու կարողության ձևավորում: Ծանոթացում սիմետրիա հասկացության: | Ծանոթ լինի զարդանախշին որպես ազգային կոլորիտի առանձնահատկություն: Իմանա բնական ներկերի մասին, մատենադարանում պահպանվող ձեռագիր մատյանների կարևորության մասին: Պատկերի հայկական զարդանախշեր: |

| | | | |
|---|---|---|---|
| 35. | Հայոց թագավորների և թագուհիների թագերը: | Ստեղծագործական աշխատանքը մեկնաբանելու, քննարկելու, գնահատելու հմտությունների ձևավորում: | Ստեղծի կրկնօրինակներ, մեկնաբանի, թե ինչպե՞ս են դրանք արտահայտում մարդկանց կյանքն ու գործունեությունը: Քննի և վերլուծի անցյալում և ներկայում արված ստեղծագործությունները՝ ըստ օգտագործված նյութերի և միջոցների: |
| 36. | Արվեստի տեսակները | Արվեստի ստեղծագործություններում պատկերված,ներկայացված միևնույն երևույթի տարբեր արտահայտությունների դիտարկում: | Թվարկի արվեստի տեսակները: Վերլուծի արվեստի ստեղծագործությունները, կիրառի քննադատական մոտեցում տեսածի և զգացածի նկատմամբ: Ընտրի շրջապատող իրականությունն արվեստի միջոցով ներկայացնելու տարբերակներ: |
| 37. | Մեր քաղաքի /գյուղի/ ճարտարապետական կոթողները | Բարոյական արժեքային համակարգի ձևավորում:. Ընկերների պատասխանները լսելու, լրացումներ կատարելու /վկայակոչելով տարբեր աղբյուրներ / կարևորում: | Ճանաչի հայտնի ճարտարապետական կոթողները, հուշաղբյուրները: Իմանա խաչքարերի մասին, որպես հայկական մշակութային կարևոր արժեք: Մարդ, բնություն, մշակույթ կապը դիտարկել որպես անբաժանելի մաս: Գիտակցի, որ հայ մշակույթը կարևոր դեր ունի համաշխարհային մշակույթի մեջ: |